

Հ.Ս.Խ.Հ. ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ—ԱՆԱՄՆԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

**ՀՐԱ ՀԱՆԳ
ԿԵՐԵՐԻ ՍԻԼՈՍԱՅՄԱՆ
ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ**

ԳՅՈՒՂՀՐԱՏ

1934

ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՄԱՆԳ ԿԵՐԵՐԻ ՍԵՆՈՍԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՌԻՆ

Համկ(բ)Կ 17-րդ համագումարը տնտեսագիտության պրոբլեմը համարեց նույնպիսի առաջնակարգ պրոբլեմ, ինչպիսին եր յերեկ արդեն իսկ հաջողութեամբ լուծված հացահատիկային պրոբլեմը:

«1934 թվականը պետք է դառնա և կարող է դառնալ բեկման տարի, վողջ տնտեսարտածական տնտեսութեան վերելքի տեսակետից» (ՍՏԱԼԻՆ):

Համկ(բ)Կ 17-րդ համագումարի վորոշման իրագործման համար պետք է հսկայական աշխատանք կատարել՝ սոցիալիստական անառնարտածութեանը կերով ապահովելու համար:

Յուրաքանչյուր կոլտնտեսութեանում ու խորհրտնտեսութեանում պետք է կերի այնպիսի պաշար ստեղծվի, վոր ապահովի վոչ միայն հանրայնացված անասունների, այլև կոլտնտեսականի անհատական ողտագործման տակ յեղած անասունների պահանջը: Բացի այդ, յուրաքանչյուր կոլտնտեսութեան ու խորհրտնտեսութեան պետք է դարնան համար անձեռնմխելի կերի պաշար ստեղծի (մասնավորապես խոտի և սիլոսի):

Յուրաքանչյուր կոլտնտեսութեանում ու խորհրտնտեսութեանում բավարար քանակով բարձրորակ սիլոսային կերի պատրաստումը կարևորագույն խնդիր է սոցիալիստական անառնարտածութեան զարգացման համար:

Հարկավոր է հիշ դնով ել լինի, վճռական բեկում ստեղծել զարգացող սիլոս մեթոդը գործում, ամբողջովին յորհանդէսով տեղ գործի տեխնիկան: Իրա համար, սիլոսացման գործում առաջատու յուրաքանչյուր բրկագիր,

յուրաքանչյուր խորհանտեսութեան լանդոր, բոլոր կողմն-
տեսականներն ու կողմնտեսութիւնները պետք է շատ լավ
յուրացնեն կերերի սխիւսացման հիմնական կանոնները:

խորհանտեսութեաններում, կողմնտեսութեաններում,
ՄՏԿայաններում ու շրջնողբաժիններում աշխատող ազ-
րոնոմներն ու գոտտեխնիկները պարտավոր են լայն մաս-
սայական աշխատանք տանել՝ վերացնելու համար սխի-
սացման գործի տեխնիկական անգրագիտութեանը, պետք է
արտադրական հրահանգներ տան, կազմակերպեն տեխնի-
կական ուսուցումը և բացատրութեաններ ու ցուցումներ
տան անմիջապէս սխիւսի պատրաստման վայրում, հենց
սխիւս: ցման ընթացքում: Սխիւսացման գործի բրիգադիւրի
հետ նրանք ևս պատասխանատու յեն սխիւսի անվորակու-
թեան համար:

Յեշնելով այս ամենից՝ սույն հրահանգի խնդիրն է՝
սխիւսացման գործի տեխնիկայի մասին տալ հիմնական
ցուցումներ, վորոնց կատարումն անհրաժեշտ է բարձրորակ
սխիւսային կեր ստանալու համար:

I. ՍԽԼՈՍԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱԲԻ ՅԵՎ ՍԽԼՈՍԱՅԻՆ ՀՈՒՄԲԻ ՄՅՈՒՍ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՎԱԲՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սխիւսացվող բոլոր կուլտուրաներն ունեն հասունաց-
ման վորոշ շրջան, վորի ժամանակ նրանք ամենամեծ չա-
փով սննդարար նյութեր են պարունակում և սխիւսացման
ամենալավ նյութ են տալիս:

Համեմատաբար լավ ուսումնասիրված սխիւսային կուլ-
տուրաների համար բերքահավաքի հետեյալ ժամկետներն
են սահմանված:

Արեվմադիկ.— ծաղկման սկզբից, բայց վոչ ուշ
լիակատար ծաղկման շրջանից:

Յեգիպտացորեն.— մոմային հասունացման շրջանում,

կամ կաթնային հասունացման շրջանում, այնտեղ, ուրնա
մոմային հասունացման չի հասնում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— հարավային շրջաններում կաթնա-
յին հասունացումից մոմային հասունացմանն անցնելու ժա-
մանակամիջոցը 3—5 որ է:

Սոյա.— միջին մասերում հատիկների հասունացման
ժամանակ:

Սորգո.— սերմերի մոմային հասունացման ժամանակ:

Տոպիկամբուր (գեսնախնձոր).— աշնանը՝ սառնամա-
նիքներն սկսվելուց առաջ (հյուսիսային շրջաններում) և
բույսի հիմնական մասսայի ցածի յերկու տերեւների չո-
րացման ժամանակ (հարավային շրջաններում):

Մոլախոսեր յեվ վայրի խոսեր.— կարելի յե սխիւսի
համար հնձել 2 անգամ. առաջին անգամ անուշայման մին-
չև ծաղկելը, իսկ յերկրորդ անգամ՝ բոտ հասունացման,
սակայն մինչև սառնամանիքներն սկսվելը:

Կաւսոմիլի փրերը.— հասունացած կարտոֆիլը հավա-
քելուց 5—6 որ առաջ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— բորոյան հեղուկով կամ ալիթու-
նավոր նյութերով սրսկված կարտոֆիլի փրերը, կաղամբի
տերեւները և ալի բույսերը սխիւսի համար չի կարելի ոգտա-
գործել, բացի այն դեպքերից, յերբ սրսկումից հետո ան-
ձրեւներ են յեկել և թունավոր նյութերը լվացվել են սրժա-
կված բույսերի վրայից:

Բոբի (Осока) յեվ ալի նահնային բույսեր.— մինչև
ծաղկելը:

Յեդեգն.— գարնանը՝ մինչև հուլիան արձակելը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— յեթե յեղեգնը սխիւսի համար հնձե-
լու ժամանակն անցել է, հարկավոր է կոշտացած մասսան
հնձել, վորպեսզի սխիւսի համար ոգտագործվի նրա անլուկը:

Խոսի յեվ յերեֆնուկի անլուկը, (отара).— նայած աման
չափին, սակայն մշտական սառնամանիքներից առնվազն
15 որ առաջ:



11-2419799

Աւմասապսուղների փրերը, կաղաքի սերեմները, բանջարանոցային մնացորդները յեմ ալլն,—այդ կուլ-տուրանների բերքահավաքի ժամանակ:

Դդումը, աւմասա-պալաւապսուղները,—այդ կուլ-տուրանների բերքահավաքի սովորական ժամկետներին, մըշ-տական սառնամանիքներ սկսվելուց առաջ:

Տերեվակալած ծառի նյութերը.—մայիսից—հուլիս:

II. ՍԻԼՈՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԸ

Կերերի սիլոսացումը կատարվում է սիլոսային դա-նազան կառուցվածքների մեջ—ինչպես գետնի յերեսին կառուցած աշտարակներում, կիսաշտարակներում, այն-պես եւ գետնի տակ պատրաստած հորերում ու խրամատ-ներում: Յուրաքանչյուր սիլոսային կառուցվածք, անկախ նրա ձևից, տեսակից ու տիպից, պետք է համապատաս-խանի հետևյալ պահանջներին.

1. Պատերը ողի ու ջրի համար անթափանցելի պի-տի լինեն:

2. Ներքին մակերեսը պիտի լինի հարթ ու հավասար:

3. Պատերը պիտի լինեն ուղղաձիգ (խրամատները պատերը կարելի յե վորոշ չափով թեք կառուցել, վորի մա-սին տես ցածում):

4. Պահանջվում է ամբողթյուն:

5. Գետնի յերեսին յեղած սիլոսային կառուցվածքնե-րը պետք է զիմանան քամիների ու փոթորկի ազդեցու-թյանը:

6. Նվազագույն ջերմաթափանցություն (теплопро-водность):

7. Կերը լցնելու և դատարկելու հարմարություններ:

8. Կառուցվածքի պարզություն:

9. Եժանություն (կառուցվածքի):

10. Խիստ զեֆիցիտային շինանյութերի խնայողու-

թյուն, սակայն վոշ ի հաշիվ բարձրորակ սիլոս ստանալու պահանջների կրճատման:

Բոլոր սիլոսային կառուցվածքները պիտի շինել գո-մերին մոտ, սակայն այն հաշվով, վոր նրանց մեջ չլցվեն մեղաջրերն ու անձրևաջրերը:

1. ՍԻԼՈՅԻ ՇՈՐ

Սիլոսի հորը փորվում է նրա մեջ սիլոս պատրաստե-լու և պահելու համար: Սիլոսի հորի խորությունը պիտի լինի առնվազն 2 մետր և պիտի փորվի այնպիսի տեղ, վոր ստորերկրյա ջրերը նրա հատակից առնվազն 0,5 մետր ցած լինեն:

Ամենալավ հորը համարվում է գլանաձևը (կոր), ա-մուր ու հարթ պատերով: Չի կարելի հորի լայնությունը (տրամագիծ) խորությունից ավելի անել:

Յեթե ստորերկրյա ջրերը խորն են, հորը կարելի յե փորել ամեն տեղ, սակայն պատերն առանց սվաղելու, կամ ամրացնելու կարելի յե թողնել միայն այն դեպքում, յե-թե հողը շատ ամուր, կավային եւ թույլ հողի դեպքում հորի պատերի ամրացումը պարտադիր է: Պատերն ամ-րացնում են այնպիսի նյութերով, վորոնք պատերի քան-դվելու առաջն առնեն և թույլ չտան, վոր ջուր անցնի հորի մեջ (փայտ, բետոն, աղյուս, քար և այլն):

2. ՍԻԼՈՍԻ ԽՐԱՍԱՏ

Սիլոսի խրամատը յերկարավուն մի հոր է, ուղղաձիգ կամ զեպի հատակը մի քիչ թեքված պատերով: Վերջին դեպքում հորի լայնությունը վերեի մասում ավելի յե լի-նում, քան հատակում: Հողի նկատմամբ նույն պահանջ-ներն են առաջադրվում, ինչ վոր հորի համար: Պատերը չամրացված խրամատներ թույլատրվում են միմիայն ա-մուր կավային հողերում:

Խրամատի մոտավոր չափն է. լայնությունը վերին մասում 3,25 մետրից մինչև 4,25 մետր, իսկ հատակում՝ 2,5—3,75 մետր, խորությունը՝ 2,5 մետրից—3,5 մետր։ Յերկարությունը կախված է սիլոսի մասսայի քանակից։

3. ՍԻԼՈՍԻ ԱՇՏԱՐԱԿ

Սիլոսի աշտարակը ամենակատարելագործված սիլոսային կառուցվածքն է։ Սիլոսի աշտարակի ամենատարածված ձևը դլանաձևն է։ Թույլատրվում է նաև բազմանկյուն (վեցանկյունի, ութանկյունի, տասներկուանկյունի) աշտարակներ։ Այդպիսի դեպքում աշտարակի ներսում անկյունները կլորացվում են։

Աշտարակն ամուր պիտի լինի, պիտի ունենա կերը հանելու անցքեր, լավ պատրաստած տանիք և ծածկոց (սամբուր)։

III. ՍԻԼՈՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԸ ԼՅՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Սիլոսային մասսան լցնելուց առաջ պետք է համոզվել, թե փորքան սարքին և սիլոսային կառուցվածքը։ Յեթե աշտարակը փայտից (յերկար ու բարակ տախտակներից) է շինված, պետք է ստուգել տախտակների զրուլթյունը, նրանց չըջապատող յերկաթակապերի ամրությունը և ձգվածությունը։ Բոլոր տեսակի աշտարակներում պիտի ստուգել, թե պատերի մեջ կամ հատակում չկան ձեղքվածքներ, սարքին են արդյոք անցքերն ու նրանց դռնակները։ Աշտարակներում նկատված բոլոր թերությունները պետք է վերացվեն մինչև սիլոսային մասսան նրանց մեջ լցնելը։ Ապա պիտի աշտարակը մաքրել կեղտից ու կողմակի իրերից, իսկ պատերին ու հատակին պետք է քսել հինգ տոկոսանոց լուծույթ՝ նոր հանդգրած կիր, փորպես ախտահանիչ նյութ։ Անցքերը փակելիս պետք

է հետևել, փոր ամուր փակվեն։ Տանիքի և անցքերի (ЛЮК) բաց տեղերը հարկավոր է ավաղել կավով, կամ ամրացնել թղթով։

Պատերը չամրացրած սիլոսային հորի կամ խրամատի պատերի ներսի շերտը պիտի քերել և խորդ ու ըորդությունները հարթել։

Յեթե հորի կամ խրամատի պատերը ներսից ամրացրած չեն, սիլոսային մասսան նրա մեջ լցնելուց առաջ պետք է մեծ քանակությամբ ջուր շաղ տալ պատերին։

IV. ՍԻԼՈՍԱՅԻՆ ՀՈՒՄԲԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Սիլոսային բույսերը կարելի չէ հնձել սովորական հնձող մեքենաներով (հնձիչ, լոբոգրեյկա, խոտհնձիչ)։ Յեթե այդպիսի մեքենաներ չկան, կամ յեղածներն ոգտագործել հնարավոր չէ, այդ դեպքում սիլոսային կուլտուրաները հնձվում են ձեռքով, կամ հարմարեցվում են պարզ մեքենայական միջոցներ։

Կարտոֆիլի փրերը կարելի չէ հնձել հնձիչով, կամ խոտհնձիչ մեքենայով։

Արմատապտուղների կեղտոտված փրերն անպայման պետք է մաքրել ցիխից ու ավազից՝ յեղանով կամ ցանցի վրա թափ տալու միջոցով, ինչպես հավաքելու ժամանակ, այնպես էլ մանրացնելուց առաջ։ Ավելի լավ է այդպիսի փրերը մի լավ լվանալ տաշտակների մեջ։

Սիլոսային մասսան փոխադրելու նպատակով կարելի չէ ոգտագործել տնտեսություն ունեցած փոխադրական միջոցները։

Սիլոսային մասսայի հունձը պիտի կատարել այն հաշվով, փոր կարելի լինի նույն օրը հավաքել, դաշտից փոխադրել և սիլոսացման յենթարկել։ Յեթե չոր ու շոգ յեղանակ է, մանավանդ հարավային շրջաններում, սիլոսային մասսան հնձելուն պես պիտի փոխադրել։ Յեթե հա-

վաքվում ու փոխադրվում և շատ հյութալի կանաչ մասսա (դդում, ահլուկ խոտ (отавы) և այլն), պետք է միաժամանակ կազմակերպել դարմանի մղեղի և այլ չոր կերերի փոխադրությունը, վորոնք պիտի խառնվեն սիլոսին, յեթե պահանջվում և պակասեցնել սիլոսային մասսայի խոնավությունը:

V. ՍԻԼՈՍԱՅԻՆ ՀՈՒՄԲԻ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Սիլոսային հումքի խոնավությունը, նայած բույսի տեսակին և վայրի կլիմայական պայմաններին, թույլատրելի յե 65—80% ի սահմաններում:

ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Յեթե սիլոսացման յենթակա մասսան խիստ չոր է (խոնավության տոկոսը 65-ից ցած է) կամ չափից ավելի խոնավ և (80%-ից ավելի), այդ դեպքում խոնավության չափը կարգավորելու համար դիմում են հետեյալ միջոցներին.

ա) Չոր կերերի խոնավացումը կատարվում է կամ խիստ խոնավ կերեր (կաղամբի տերեւներ, արմատապտուղներ և այլն) վրան ավելացնելով և կամ ուղղակի ջուր ցանելով:

բ) Խոնավության չափի իջեցումը կատարվում է չոր կամ սակավ խոնավ կերեր ավելացնելով (մղեղ, մանրած դարման, յեգիպտացորենի մանրած ցողուններ և այլն):

Թե առաջին և թե յերկրորդ դեպքում պետք է տարբեր չափի խոնավություն ունեցող կերերը շատ լավ խառնել իրար, վորպեսզի միանման խոնավություն ունեցող մասսա ստացվի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Թույլատրելի յե առանց խոնավություն ավելացնելու բույսը սիլոսացման յենթարկել նաե, յեթե առնվազն 60% խոնավություն ունի, սակայն այդ դեպք

քում պահանջվում է շատ մանր կտրատել (2 սանտիմետրից վոչ ավելի), խիստ կերպով ամրացնել (трамбовка) և անմիջապես ծածկել ող չթափանցող տանիքով:

VI. ՍԻԼՈՍԱՅԻՆ ՅԵՆԹԱԿԱ ԿԵՐԵՐԻ ՄԱՆՐԱՅՈՒՄԸ

Սնալայմանորեն անհրաժեշտ է մանրացնել կոշտ ու անամեջ ցողունավոր, փուշ ցողունավոր, ճյուղավոր ու բարձր հասակ ունեցող բույսերը, մանավանդ յեղեգն ու ծառի մատղաջ ճյուղերը, կարտոֆիլի փրերը, ծղոտը, յեգիպտացորենի ցողունը, բոշխը (осока) և բոլոր լոբազգի բույսերը:

Բոլոր 65—80% խոնավություն ունեցող սիլոսային բույսերը մանրացման պահանջի տեսակետից կարելի յե բաժանել 2 մասի.

1. Կոշտացողուն և փուշացողուն բույսերը (յեղեգն, կոշտացողուն մուրխոտեր, առվույտ և այլն) մանրացվում են 1—2 սմ. վոչ ավելի:

2. Կոշտացողուն, սակայն ցողունի ներսը լիքը բույսերը (յեգիպտացորենի ցողունը, սորգոն, արևածաղիկը և այլն), ինչպես և կարտոֆիլի փրերը մանրացվում են անպայման 2—3 սմ.:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կոշտացած, բայց նորմալ խոնավություն ունեցող բույսերը պիտի մանրացնել առաջի խմբի բույսերի չափով:

3. Ծաղիղեղի, շաղգամի փրերը, կաղամբի տերեւները, ինչպես և ահլուկը (отавы) խորհուրդ է արվում մանրել, սակայն յեթե շատ չեն թառամած և խոշոր չեն, կարելի յե սիլոսել նաե առանց մանրելու:

Մանրացումը կարելի յե կատարել ինչպես հատուկ մեքենաներով (սիլոսահատ), այնպես ևլ հարմարեցված կալիքներով, իսկ բացառիկ դեպքերում ձեռքի գործիքներով: Արմատա-պալարապտուղները, դդումը և ձմերուկը մանրե-

լու համար անհրաժեշտ է գործածել արմատահատներ-
ձյուղերը մանրելու համար անհրաժեշտ է ոգտագործել
սիլոսահատ:

VII. ԿԱՆԱԶ ՄԱՍՍԱՆ ԼՅՆԵԼԸ

Անկախ նրանից, թե մասսան լցվում է մանրած կամ
առանց մանրելու, պահանջվում է մեծ խնամքով և շատ
խիտ ու հավասարաչափ լցնել սիլոսային կառուցվածքը:
(հորը, խրամատը, աշտարակը):

Նորմալ խոնավությամբ մասսան խտացնելու համար
վերցնում են մոտավորապես 5 ք. մ. տարածության հա-
մար մեկ բանվոր: Յեթե կերի խոնավության տոկոսը
70—75-ից ավելի չէ, մեկ քառ. մետրին պահանջվող բան-
վորական ուժի նորման վորոշ չափով պակասում է և ընդ-
հակառակը, յեթե խոնավությունը պակաս է, բանվորա-
կան ուժի պահանջն ավելանում է: Սիլոսի մասսան ամ-
րացնելու համար կարելի չէ ոգտագործել նաև կենդանի-
ները (յեղներ, ձիեր), իսկ յերկար խրամատներում՝ նաև
տրակտորներ (լավ է անիվներով): Բարձր սիլոսային աշ-
տարակներն ու կիսաշտարակները լցնելիս անհրաժեշտ է
ուռենալ առնվազն 4 մեծահասակ բանվոր, վորոնց պար-
տականութունը պիտի լինի աշտարակի մեջ լցված մաս-
սան հարթել ու ամրացնել: Առանձն ապես խնամքով
պիտի ամրացնել սիլոսային կառուցվածքի
պատերի մոտի մասսան: Ստացում-ամրացումը կա-
տարվում է սիլոսային մասսան լցնելու ընթացքում ան-
ընդհատ:

Սիլոսային կառուցվածքը պիտի լցնել առանց ընդ-
հատումների և ըստ հնարավորին շատ կարճ ժամանակա-
միջոցում, այն է՝ հորերն ու խրամատները 2—3 օրում,
աշտարակները՝ 4—5 օրում:

Յեթե սիլոսային կառուցվածքը միանգամից լցնելու

հնարավորություն չկա, ապա աշխատանքն այնպես պիտի
կազմակերպել, վոր օրական առնվազն 1 մետր հաստու-
թյամբ կանաչ մասսա լցվի նրա մեջ:

Բացառիկ դեպքում, յեթե կանաչ մասսայի պակա-
սության կամ վորեն ալ հիմնավոր պատճառով հնարավոր
չէ խրամատը միանգամից լցնել, թույլատրվում է մաս-
մաս լցնել, վորի համար խրամատի լայնությամբ դրվում
են ջուր չթափանցող նյութից (տախտակ) շինված շար-
ժական պատեր: Այդ պատով առանձնացված մասը լցվում
է մինչև վերջ և ծածկվում սովորական ձևով: խրամատի
մյուս մասերը լցնելիս՝ առաջուց լցրած մասը բաժանող
պատը չի հանվում, այլ մնում է իր տեղը:

VIII. ՍԻԼՈՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ԾԱԾԿԸ

Անհրաժեշտ է ձգտել, վոր սիլոսային կառուցվածքի
կառուրը ծածկվի գերմետիկ կերպով այնպես, վոր վոշ ոգ-
անց կացնի, վոշ ջուր:

ՀՈՐԵՐԻ ՅԵՎ ԽՐԱՄԱՏՆԵՐԻ ԾԱԾԿԸ

Հորը կամ խրամատը վերջնականապես լցնելուց հետո
ծածկում են հետևյալ միջոցներից վորեն մեկով:

Առաջին միջոցը.— կերի յերեսը ծածկվում է խիտ
խոնավացրած սակավաբժեք նյութերով—տորֆ, փայտի
սղոցուկ, ծառի տերևներ, մզկղ կամ դարման, այնպես
վոր ստացվի 5 սմ. խտացրած շերտ:

Այդ խոնավացրած շերտը ծածկվում է 10 սմ. հաս-
տությամբ կավի շերտով: Կավը խոնավացվում է տրոր-
վում, ամրացվում է: Կավի վրա փռվում է 25—35 սմ.
հաստությամբ հողի շերտ. հողի շերտի հաստությունը կախ-
ված է ջրջանի պայմաններից ու տեղի փորձից: Հողի ծած-
կը պետք է դրեթաձև լինի և նրա հիմքը պետք է 50 սմ.
հեռու լինի հորի պոռնակներից: Ծածկի վրա առաջացած

ձեղքվածքներն անմիջապես պետք է հողով լցվեն ու ամրացվեն: Հորի կամ խրամատի վրա կառուցվում է ծածկ: Հողի ծածկը ջերմացնելու և ձմեռը հորը բաց անելու գործը դյուրացնելու նպատակով նրա վրա դրվում է ծղոտի մի շերտ: Միլոսի հորը կամ խրամատը բաց անելուց հետո այդ ծղոտը կարելի չէ ոգտագործել:

Ֆեհլոդը ձևվր.— առաջին ձևում նշած տանիքի վրա (մղեղ, տորֆ, սղոցուկ և այլն) ուղղահայաց պատեր ունեցող խրամատներում ու հորերում դրվում է ուղղահայաց, քանդվող վահան, պատրաստված ամուր տախտակներից, վորը պետք է հենվի հորի կամ խրամատի պատերին, միաժամանակ նա պետք է ազատ ու համաչափ լիջնի հորի մեջ՝ նստող սիլոսային մասսայի հետ միասին: ձեղքերը սվաղվում են կավով: Վահանի վրա ծանրություն է դրվում, հաշվելով վահանի մակերեսով յուրաքանչյուր քառակուսի մետրին 5 ցենտներ: Միլոսը հանելու հարմարության, ինչպես և հորը կամ խրամատը անձրևներից և ձյունից ապահովելու համար անհրաժեշտ է նրանց վրա ծածկ կառուցել: Հորի կամ խրամատի հողի ծածկի վրա դրվում է ծղոտի հաստ շերտ, կամ այլ տաքացնող նյութեր: Սրամատը կամ հորն ազատվելուց հետո այդ տաքացնող նյութը կարող է ոգտագործվել այլ նպատակի:

Հորերի ու խրամատների շուրջը, նրանց պռունդից 1 մետր հեռավորության վրա անհրաժեշտ է սովակներ փորել և կանոնավոր վիճակում պահել, փորպեսզի ծածկի կտուրից հոսող ջրերը սիլոսի հորի կամ խրամատի մոտ չհավաքվեն:

ԱՇՏԱՐԱԿՆԵՐԻ ԾԱԾԿԵԼՆ ՈՒ ՏԱՔԱՅՆԵԼԸ

Միլոսային աշտարակը վերջնականապես լցնելուց հետո անհրաժեշտ է մասսայի վերին մասը խնամքով հարթել ու ամրացնել, ապա պատրաստել ոգ ու ջուր չանցկացնող ջերմացնող կտուր (ծածկ): Աշտարակը ծածկելու մի քանի ձև կա.

1. Ծածկում են կարած, ոգ չանցկացնող խավաքարտով (ТОЛБ) ու ամուր պատրաստած տախտակե վահանով, նրա վրա դնելով ծանրություն այն հաշվով, վոր ծածկի 1 բ. մ. տարածությանը 100—150 կգ. ծանրություն ընկնի:

2. Ծածկում են 10—15 սմ. հաստությամբ կավաշերտով:

Աշտարակները տաքացնելու համար անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

ա) տանիքն ու ծածկոցը (ТАМБЫР) պահել բուրովին կանոնավոր վիճակում.

բ) ձմեռը բոլոր անցքերը (ЛЮКИ) ամուր փակած պահել և բաց անել միայն սիլոս հանելիս.

գ) սիլոսի վրայից ծածկել ծղոտի փայտով, խաիրով կամ խծուծով.

դ) աշտարակը դրսից տաքացնելու համար հանձնարարվում է նրա շուրջը թեթև ցանց կամ ցանկապատ շինել և ցանկապատի և աշտարակի արանքում յեղած տարածությունը լցնել տորֆով, մամուռով, դարմանով կամ մղեղով: Կարելի չէ նաև աշտարակը փաթաթել ծղոտով: Այդպիսի ջերմացուցիչներ ցանկալի չէ շինել դեռևս փեր մինչև աշտարակի $\frac{1}{3}$ բարձրությունը: Տաք յեղանակներն սկսվելիս ջերմացուցիչ շերտը հեռացվում է:

Այս ձևով հարկավոր է տաքացնել խիստ ձմեռ ունեցող շրջաններում կառուցված աշտարակները, փորոնք կարող են սառչել:

IX. ՀՈՐԵՐԻ ՈՒ ԽՐԱՄԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԳԸ

Միլոսը դատարկելուց, ոգտագործելուց հետո սիլոսային կառուցվածքները պետք է լավ մաքրել սիլոսի մաքուր դնելից, կեղտից, իսկ հորերի ու խրամատների շուրջը պետք է ցանկապատ քաշվի, փորպեսզի անասունները չընկնեն նրանց մեջ: Զրատար առուները պետք է շարունակ

կանոնավոր վիճակում պահել: Բոլոր սիլոսային կառուցվածքները մանրամասն հետազոտել, ստուգել ու նշել բոլոր թերությունները, վորպեսզի նրանց անհրաժեշտ վերանորոգումը մտցվի աշխատանքի պլանի մեջ և կատարվի մինչև նորից լցնելու ուրերը: Յեթե խրամատի պատերը փայտով կամ ցեխով են ամրացված, անհրաժեշտ է նրանց նեցուկներ տալ, վորպեսզի ամուսվա ընթացքում, մինչև նորից լցնելը, հողը փուլք չտա:

Որամատներն ու հորերը նորից լցնելուց առաջ պետք է կրկին վերանորոգվեն, մաքրվեն և հականեխվեն:

1. ԽՈՐ ՄԵՏՐ ՍԷԼՈՍԱՅԻՆ ԿԵՐԻ ԿՇԻՌԸ ԼՑՆԵԼՈՒՑ ՅԵՎ ԱՄՐԱՆԱԼՈՒՑ ՇԵՏՈ

Սիլոսացած կերի կշիռը վորոշելիս պետք է հաշվի առնել մի շարք ֆակտորներ, վորոնք ազդում են կերի կշռի վրա:

Կերի խոնավությունը լցնելիս խոնավության տոկոսն ավելացնելիս ավելանում է նաև մեկ միավոր կերի կշիռը և, ընդհանրապես, խոնավության իջեցնելիս իջնում է և կշիռը:

Կսրվածքի յերկարությունը վորքան կերը մանր է կտրատած, այնքան ավելի շատ է տեղավորվում մեկ միավոր ծավալում:

Բույսերի կոեսությունն ու առաձգականությունը.

Խսացման աստիճանը. վորքան խիտ է լցված սիլոսանյութը, այնքան քարձք է լինում նրա քաշը:

Կերի սյունի բարձրությունը (սիլոսային կառուցվածքի տեսակը) աշտարակներում կերն ավելի խիտ է լինում, քան հորերում և խրամատներում:

Սիլոսի մնալու ժամկետությունը. կերը սիլոսային կառուցվածքի մեջ նորմալ չափով նստելու համար պետք է

մնա առնվազն 30 որ: Վորքան ավելի յե մնում սիլոսը, այնքան մասսան ավելի յե խտանում:

Բույսի տեսակը. լիք ցողուններով բույսերը, ինչպես և փրերը, նորաբույս խոտը և այլն ավելի ծանր սիլոս են տալիս, քան փուլ ցողունավոր կամ խոշորածյուղ բույսերը:

Բույսերի նստումացման աստիճանը յեվ փախկան կազմությունը:

65—75 տոկոս խոնավություն ունեցող լավ նստած սիլոսի կերի մեկ խոր. մետրի միջին քաշն է՝ հորերում ու խրամատներում 6 ցենտներ, աշտարակներում՝ 6,5 ցենտ.—7 ցենտներ:

Կերի խոնավության ամեն մի տոկոս բարձրացումով մեկ տոկոս էլ բարձրանում է կշիռը. որինակ՝ 80% խոնավության դեպքում կշիռը 70% խոնավության ունեցածի համեմատությամբ ավելանում է 10 տոկոսով:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՅՆԵՐ ԳԱԶԵՐՈՎ ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼՈՒ ԴԵՄ

Կերի սիլոսացումով տեղի յե ունենում չափազանց քարդ քիմիա-բակտերիոլոգիական պրոցես, վորի հետևանքով կերի մանրաբար նյութերի մի մասը փոփոխվում և առաջանում են թթվուտներ ու գազեր:

Առաջացած գազերից մեծ վտանգ է ներկայացնում ածխածինթվուտային գազը, մանավանդ սկզբնական շրջանում՝ լցնելիս, ընդհատումների ժամանակ և կերակրելու համար սիլոսային կառուցվածքը բանալիս:

Ածխածինթվուտային գազը կուտակվում է խոր հորերի հատակում կամ լավ ծածկված աշտարակում:

Գազերի կուտակումից խուսափելու համար, լցնելու ժամանակ անցքերը կամ գլուխը թողնում են բաց, վորպեսզի հողմահարվի:

20

Հորի կամ աշտարակի մեջ մտնելիս՝ նախապես պետք
է համոզվել, փոր դադ (ածխաթիֆուտ) չկա: Դրա համար
հակահրդեհային նախադիւշացումով պետք է վառված
նավթի լոմպ կամ վառված մոմ իջեցնել հորի կամ աշտա-
րակի մեջ: Յեթե լույսը հանգչում է, նշանակում է շենքը
հողմահարելուց առաջ նրա մեջ մտնել չի կարելի:

Սիլոսային կառուցվածքը հողմահարել կարելի յե ինչ-
պես տանիքը կամ անցքերը բաց թողնելով, այնպես եւ
եւեմատորի խողովակից սիլոսահատի միջոցով ոգ դուրս
քաշելով:



Պատ. խմբագիր՝ Աբշ. Շահնազարյան

Թարգմ.՝ Հ. Հարությունյան

Սրբագրիչ՝ Խ. Սյվազյան

Թույլատրված է Գլավլիտի լիազոր № 280:

Հանձնվել է արտադրության 1934 թ. հունիսի 13-ին

Ստորագրվել է տպագրելու 1934 թ. հունիսի 20-ին

Հրատ. № 125, տիւրմ 2000, պատվեր № 460

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՇՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50



9116 20 4.

10

11
27197



Инструкция
по технике силосования кормов